r insights



# Հայաստանում ոստիկանության և ոստիկանության բարեփոխումների հանրային ընկալման հետազոտություն

Ապրիլ, 2026

**Պատվիրատու՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)**

**Իրականացնող՝ ԱրԻնսայթս հետազոտական ընկերություն**

# Ծանոթագրություն

Սույն հետազոտությունը պատվիրակվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ-ի) կողմից՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հաշվետու, արդյունավետ և գենդերազգայուն ինստիտուցիոնալ կառուցակարգեր ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունում և Փրկարար Ծառայությունում» (AEGIS) ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից:

Սույն հետազոտության բովանդակության համար պատասխանատու է իրականացնող ընկերությունը: Այն կարող է չարտահայտել ԵԱՀԿ-ի տեսակետները:

# 1. Մեթոդաբանությունը



Նկարը՝ istockphoto կայքից Credit:KrimKate

# 4. Նպատակը և խնդիրները

## Նպատակը

Ուսումնասիրել ՀՀ ոստիկանության և ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ հանրային ընկալումները:



Նկարը՝ https://hyurservice.com

## Խնդիրները

1. Պարզել ներքին ապահովության և անվտանգության սպառնալիքների ընկալումները:
2. Ուսումնասիրել ոստիկանության և ՆԳՆ նկատմամբ վստահության մակարդակը և վերաբերմունքը:
3. Ուսումնասիրել ոստիկանության գործառույթների իրականացման արդյունավետության ընկալումները և գոհունակության մակարդակը:
4. Ուսումնասիրել ոստիկանության հետ առնչության փորձառությունը:
5. Ուսումնասիրել ոստիկանության բարեփոխումների մասին իրազեկվածությունը և դրանց նկատմամբ վերաբերմունքը:
6. Ուսումնասիրել հանրության կարծիքը և վերաբերմունքը ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության վերաբերյալ:
7. Պարզել ոստիկանության վերաբերյալ և առհասարակ նորությունների ստացման տեղեկատվության աղբյուրները:

# 5. Հետազոտության մեթոդաբանությունը

<table>
<tr><th></th><th>2024</th><th>2026</th></tr>
<tr><td>Մեթոդը</td><td colspan="2">• Հեռախոսային հարցազրույց (CATI - Computer-Assisted Telephone Interviewing)<br>• Հարցազրույցներն իրականացվել են պատահական հեռախոսահամարների զանգելու միջոցով (RDD- Random digit dialing)։ Յուրաքանչյուր հեռախոսահամարի իրականացվել է առնվազն 3 կոնտակտ։</td></tr>
<tr><td>Թիրախային խումբը</td><td colspan="2">ՀՀ չափահաս բնակչություն, 6+ամիս ՀՀ–ում բնակվող</td></tr>
<tr><td>Ընտրանքի ծավալը և սխալը</td><td><table><tr><th></th><th>Ընտրանքի ծավալը</th><th>Ընտրանքի սխալը (95% վստահելիության մակարդակում )</th></tr><tr><td>Բոլոր հարցվողները</td><td>1801</td><td>±2.3%</td></tr><tr><td>Երևան</td><td>601</td><td>±4%</td></tr><tr><td>Քաղաքային բնակավայր</td><td>600</td><td>±4%</td></tr><tr><td>Գյուղական բնակավայր</td><td>600</td><td>±4%</td></tr></table></td><td><table><tr><th></th><th>Ընտրանքի ծավալը</th><th>Ընտրանքի սխալը (95% վստահելիության մակարդակում )</th></tr><tr><td>Բոլոր հարցվողները</td><td>1812</td><td>±2.3%</td></tr><tr><td>Երևան</td><td>604</td><td>±4%</td></tr><tr><td>Քաղաքային բնակավայր</td><td>604</td><td>±4%</td></tr><tr><td>Գյուղական բնակավայր</td><td>604</td><td>±4%</td></tr></table></td></tr>
<tr><td>Ընտրանքի կառուցվածքը</td><td>• Արդյունքները կշռվել են՝ նշված 3 ստրատաների համամասնությունը համապատասխանեցնելով ՀՀ մշտական բնակչության բաշխմանն ըստ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների (Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2023)։<br>• Ընտրանքում սահմանվել են քվոտաներ՝ կառուցվածքը համապատասխանեցնելով ՀՀ բնակչության սեռատարիքային բաշխմանը՝ ըստ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների։ (ՀՀ 2022 թվականի մարդահամարի հիմնական արդյունքները)։</td><td>• Արդյունքները կշռվել են՝ նշված 3 ստրատաների համամասնությունը համապատասխանեցնելով ՀՀ մշտական բնակչության բաշխմանն ըստ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների (Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2025)։<br>• Ընտրանքում սահմանվել են քվոտաներ՝ կառուցվածքը համապատասխանեցնելով ՀՀ բնակչության սեռատարիքային բաշխմանը՝ ըստ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների։ (Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2025)։</td></tr>
<tr><td>Տվյալների հավաքագրման ժամանակահատվածը</td><td>11.01.2024-25.01.2024</td><td>07.04.2026-22.04.2026</td></tr>
<tr><td>Հարցազրույցի տևողությունը</td><td>17 րոպե 19 վայրկյան (միջինում)</td><td>19 րոպե 42 վայրկյան (միջինում)</td></tr>
<tr><td>Տվյալների որակի ստուգումը</td><td>• Հարցազրույցների 100%-ը ձայնագրվել է, ստուգվել են տրամաբանական կապերը հարցերի միջև։<br>• Հարցազրույցների 24% -և անցել է որակի վերահսկման ամբողջական ստուգում՝ լրացված հարցաթերթը աուդիոձայնագրության հետ համեմատելու միջոցով։<br>• Հարցազրույցների 100%-ը անցել է որակի վերահսկման մասնակի ստուգում՝ առանցքային հարցերի պատասխանները աուդիոձայնագրության հետ համեմատելու միջոցով։</td><td>• Հարցազրույցների 100%-ը ձայնագրվել է, ստուգվել են տրամաբանական կապերը հարցերի միջև։<br>• Հարցազրույցների 30% -ը անցել է որակի վերահսկման ամբողջական ստուգում՝ լրացված հարցաթերթը աուդիոձայնագրության հետ համեմատելու միջոցով։<br>• Հարցազրույցների 100%-ը անցել է որակի վերահսկման մասնակի ստուգում՝ առանցքային հարցերի պատասխանները աուդիոձայնագրության հետ համեմատելու միջոցով։</td></tr>
<tr><td>Տեղեկություն</td><td colspan="2">✓ N նշանով ցույց է տրված ընտրանքը յուրաքանչյուր հարցի համար։<br>✓ Տոկոսային ցուցանիշներ ներկայացնող գծապատկերներում մեծամասամբ ցուցադրված են կլորացված արժեքներ, ինչի արդյունքում տոկոսային ցուցանիշների գումարը (ընդհանուրը) կարող է տարբերվել 100%-ից։<br>✓ Տոկոսային ցուցանիշները մեծամասամբ ներկայացված են ստորակետից հետո մեկ նիշով, ինչի արդյունքում 2026 և 2024 թվականների դինամիկայի՝ ներկայացված ցուցանիշները կարող են առերևույթ չհամընկնել նշված թվականներին արձանագրված ցուցանիշների տարբերության հետ՝ թվի հարյուրերորդական արժեքից տասնորդականի կլորացման արդյունքում։<br>✓ Հաշվետվության շրջանակներում հարցվողների ենթախմբերի միջև վիճակագրորեն նշանակալի տարբերությունները նշված են սլաքով՝ ↓↑ ։<br>✓ Հաշվետվության շրջանակներում ցուցանիշների դինամիկաների փոփոխությունները նշված են ▲ (աճի) և ▼ (նվազման) նշաններով։</td></tr>
</table>

# 6. Իրականացված զանգերի արդյունքները

| Զանգերի ընդհանուր քանակը | 43 184 |
|---|---|
| Պատասխանելիության մակարդակ | 11.4% |
| Զանգերի արդյունավետությունը | 4.2% |




| Չեն համապատասխանել սահմանված չափանիշներին. | 7.2% |
|---|---|
| որոնցից՝ | |
| 1. Հարցվողը թիրախային ոլորտի աշխատակից է (ոստիկանություն, իրավապահ մարմիններ) կամ ընտանիքի անդամը, մոտ բարեկամը, ընկերն աշխատում է ոստիկանությունում | 1.7% |
| 2. Տարիքը չի համապատասխանել (փոքր է 18 տարեկանից) | 1.5% |
| 3. Հարցվողը չի հանդիսացել ՀՀ ռեզիդենտ | 1.3% |
| 4. Փակ քվոտա, տվյալ տարիքային խմբի/բնակավայրում բնակվողների հետ հարցումների սահմանված քանակը լրացել է | 1.3% |
| 5. Չեն համապատասխանել այլ չափանիշներով (կազմակերպության հեռախոսահամար է եղել, տեխնիկական խնդիրներ, հանդիսացել են զինծառայող, հրաժարվել են նշել՝ արդյոք թիրախային ոլորտում են աշխատում և այլն) | 1.4% |

N=43 184

- Լիարժեք իրականացված հարցազրույց
- Մասնակի իրականացված հարցազրույց (հարցազրույցը ընդհատել են)
- Խնդրել են զանգել ավելի ուշ
- Հրաժարվել են մասնակցել հարցմանը
- Հարցվողների հետ կապ չի հաստատվել
- Չեն համապատասխանել սահմանված չափանիշներին

* American Association for Public Opinion Research (AAPOR), զանգերի արդյունավետության ցուցանիշը (պատասխանելիության մակարդակը) հաշվարկվել է՝ ըստ ստորև ներկայացված բանաձևի՝

**Պատասխանելիության մակարդակը**= $\frac{(I+P)}{((I+P)+(R+NC+O)+(UH+UO))}$

I-ը լիարժեք լրացվածն հարցազրույցներն են; P-ն մասնակի հարցազրույցներն են (այդ թվում՝ չափանիշներով չհամապատասխանած հարցվողները) ; R-ը հրաժարվածների թիվն է; NC-ը՝ կապ չհաստատված զանգերն են (չհաշված գոյություն չունեցող համարները); O նշանակում է այլ ելքերը; UH գոյություն չունեցող համարներն են (Unknown Household); UO-ն այլ անհայտ պատճառներն են


Նկարը՝ tourarmenia կայքից

# 2. Ներքին անվտանգային իրավիճակի ընկալումները

# 8. **Ներքին անվտանգային իրավիճակի ընկալումները,** 2024 **և** 2026

**Հարց**. Ինչպե՞ս կգնահատեք Հայաստանում ներքին անվտանգային իրավիճակը: Ներքին անվտանգություն ասելով նկատի ունենք հանրային անվտանգությունը, հանցավորության մակարդակը և այլն: Անվտանգությունը գնահատեք 1-4 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես անվտանգ չէ», իսկ «4»-ը՝ «լիովին անվտանգ է»:







**Պատասխանների դինամիկան**

▲+3.9%

2026 և 2024 թվականների «լիովին անվտանգ է» և «ավելի շուտ անվտանգ է» պատասխանների դինամիկան

▼ -2.3%

2026 և 2024 թվականների «ավելի շուտ վտանգավոր է» և «ընդհանրապես անվտանգ չէ» պատասխանների դինամիկան

# 9. **Ներքին անվտանգային իրավիճակի ընկալումներն ըստ հարցվողների սոցիալ – ժողովրդագրական ենթախմբերի,** 2024 և 2026

**Հարց**. Ինչպե՞ս կգնահատեք Հայաստանում ներքին անվտանգային իրավիճակը: Ներքին անվտանգություն ասելով նկատի ունենք հանրային անվտանգությունը, հանցավորության մակարդակը և այլն: Անվտանգությունը գնահատեք 1-4 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես անվտանգ չէ», իսկ «4»-ը՝ «լիովին անվտանգ է»:



# 10. **Ներքին անվտանգային խնդիրների ընկալումները,** 2024 և 2026

**Հարց.** Ինչպե՞ս կգնահատեք Հայաստանում ներքին անվտանգային իրավիճակը: Ներքին անվտանգություն ասելով նկատի ունենք հանրային անվտանգությունը, հանցավորության մակարդակը և այլն:




## Ներքին անվտանգային խնդիրները

**Հարց.** Ձեր կարծիքով, որո՞նք են **ամենալուրջ ներքին անվտանգային խնդիրները,** որոնք սպառնալիքներ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ապահովությանը և անվտանգությանը:

| | 2024* | 2026* | Պատասխանողների դինամիկան |
|---|---|---|---|
| Թմրամոլություն և թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը | 30.4% | 31.7% | +1.3% |
| Մանր հանցագործությունները | 22.2% | 19.6% | -2.6% |
| Հանցագործությունների աճը, անհանդուրժողականությունը | 5.2% | 16.3% | +11.1% |
| Մարդասպանությունը | 7.3% | 14.3% | +7.1% |
| Ճանապարհային անվտանգությունը | 10.7% | 12.8% | +2.1% |
| Երիտասարդների կողմից կատարվող հանցագործությունները | 6.2% | 10.7% | +4.5% |
| Դպրոցների անվտանգությունը | 7.3% | 9.1% | +1.8% |
| Ապօրինի հրազեն ունենալը | 5.1% | 7.8% | +2.7% |
| Կոռուպցիան և պաշտոնական դիրքի չարաշահումը | 15.1% | 7.4% | -7.7% |
| Սահմանային անվտանգությունը | 7.3% | 6.9% | -0.3% |
| Պետական կառույցների թերի աշխատանքը | 3.4% | 6.9% | +3.5% |
| Ընտանեկան բռնությունը | 5.3% | 4.6% | -0.8% |
| Քաղաքական անկայուն իրավիճակը | 2.1% | 3.4% | +1.2% |
| Օրենքի թերացումը, իրավունքների խախտումը | 1.5% | 3.2% | +1.7% |
| Սեռական բռնությունը | 2.6% | 3.2% | +0.6% |
| Բռնի ուժի կիրառում ոստիկանության կողմից արգելանքի ժամանակ | 5.4% | 2.9% | -2.5% |
| Խնդիրներ,վտանգներ չկան | 3.5% | 2.5% | -1.0% |
| Տնտեսական հանցագործությունը | 3.8% | 2.2% | -1.6% |
| Օտարերկրյա քաղաքացիների մուտքը ՀՀ | 3.0% | 1.5% | -1.5% |
| Հարբեցողությունը և ալկոհոլի չարաշահումը | 0.4% | 0.8% | +0.4% |
| Թափառող շները | 1.1% | 0.7% | -0.4% |
| Մարդկանց թրաֆիքինգը | 2.2% | 0.4% | -1.8% |
| Այլ խնդիրներ** | 5.2% | 5.5% | +0.2% |
| Դժվարանում եմ պատասխանել | 9.9% | 4.5% | -5.4% |
| | N =1801 | N =1812 | |

*Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող են նշել մինչև 3 խնդիր:

** Այլ խնդիրներում ներառված են հարցվողների կողմից 0.8% և ավելի ցածր հաճախականությամբ նշված պատասխանները:
Որպես այլ խնդիրներ հարցվողները նշել են՝ վատ լուսավորությունը փողոցներում, գործազրկության և աղքատության մակարդակը, ապատեղեկատվության տարածումը, խաղամոլությունը, առողջապահական համակարգը, սեռական փոքրամասնությունները, միգրացիան, մշակութային սպառնալիքները, հանրային տրանսպորտի խնդիրները:

## 11. **Ապահովության զգացողությունը ցերեկային ժամերին և մութն ընկնելուց հետո,** 2024 և 2026

**Հարց**. Որքա՞ն ապահով եք զգում՝ ցերեկը միայնակ փողոց դուրս գալիս: Գնահատեք 1-4 միավորով, որտեղ «1» նշանակում է «ընդհանրապես ապահով չեմ զգում», «2»՝ «ավելի շուտ ապահով չեմ զգում», «3»՝ «ավելի շուտ ապահով եմ զգում», «4»՝ «լիովին ապահով եմ զգում»:
**Հարց**. Որքա՞ն ապահով եք զգում մութն ընկնելուց հետո փողոցում միայնակ գտնվելիս: Գնահատեք 1-4 միավորով, որտեղ «1» նշանակում է «ընդհանրապես ապահով չեմ զգում», «2»՝ «ավելի շուտ ապահով չեմ զգում», «3»՝ «ավելի շուտ ապահով եմ զգում», «4»՝ «լիովին ապահով եմ զգում»:



# 12. **Ապահովության զգացողությունը ցերեկային ժամերին,** 2024 և 2026

**Հարց**. Որքա՞ն ապահով եք զգում՝ ցերեկը միայնակ փողոց դուրս գալիս: Գնահատեք 1-4 միավորով, որտեղ «1» նշանակում է «ընդհանրապես ապահով չեմ զգում», «2»՝ «ավելի շուտ ապահով չեմ զգում», «3»՝ «ավելի շուտ ապահով եմ զգում», «4»՝ «լիովին ապահով եմ զգում»:



# 13. **Հիմնական անհանգստությունները ցերեկային ժամերին,** 2024 և 2026

**Հարց.** Որքա՞ն ապահով եք զգում՝ ցերեկը միայնակ փողոց դուրս գալիս: Գնահատեք 1-4 միավորով, որտեղ «1» նշանակում է «ընդհանրապես ապահով չեմ զգում», «2»՝ «ավելի շուտ ապահով չեմ զգում», «3»՝ «ավելի շուտ ապահով եմ զգում», «4»՝ «լիովին ապահով եմ զգում»:




## Ցերեկային ժամերին անհանգստության պատճառները

**Հարց**. Եթե ցերեկը միայնակ փողոցում գտնվելիս ապահով չեք զգում, ի՞նչն է ստիպում Ձեզ անհանգստանալ:

| | 2024* | 2026* | Պատասխանների դինամիկան |
|---|---|---|---|
| Հանցագործությունից տուժելու ռիսկը | 20.6% | 47.3% | +26.7% |
| Ճանապարհատրանսպորտային պատահարից տուժելը, վրաերթի ենթարկվելու ռիսկը | 33.6% | 21.3% | -12.3% |
| Թափառող շները և/կամ այլ կենդանիները | 23.1% | 13.2% | -9.8% |
| Փողոցներում ալկոհոլի կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ գտնվող մարդիկ | 7.3% | 12.6% | +5.3% |
| Ագրեսիվ պահվածքով անվերահսկելի երիտասարդները փողոցում | 7.6% | 10.9% | +3.3% |
| Երկրի ընդհանուր վիճակը, տրամադրությունները | 4.6% | 7.7% | +3.1% |
| Հանրային տարածքներում անվտանգության և առողջապահական կանոնների պահպանման անբավարար մակարդակը | 4.1% | 6.6% | +2.5% |
| Ոստիկանության աշխատակիցների պարտականությունների չարաշահումը | 2.7% | 4.6% | +1.9% |
| Անձնական պատճառներ. առողջական խնդիրներ | 0.0% | 2.8% | +2.8% |
| Հեռուստատեսությամբ և համացանցում քննարկվող հանցավորությունը | 3.7% | 1.8% | -1.9% |
| Սահմանամերձ գոտում գտնվելը, արտաքին թշնամին, թուրքը | 3.6% | 1.6% | -2.0% |
| Օտարերկրացիները | 6.6% | 0.9% | -5.7% |
| Սկուտերները | 1.0% | 0.0% | -1.0% |
| Դժվարանում եմ պատասխանել | 3.1% | 4.2% | +1.1% |
| | N =112 ** | N =130 ** | |

*Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող են նշել մինչև 3 պատճառ:
** Հարցը տրվել է այն հարցվողներին, ովքեր նշել են, որ ցերեկային ժամերին միայնակ փողոց դուրս գալիս ավելի շուտ կամ ընդհանրապես ապահով չեն զգում իրենց:

# 14. **Ապահովության զգացողությունը մութն ընկնելուց հետո ըստ հարցվողների սոցիալ – ժողովրդագրական ենթախմբերի,** 2024 և 2026

**Հարց**. Որքա՞ն ապահով եք զգում՝ մութն ընկնելուց հետո փողոցում միայնակ գտնվելիս: Գնահատեք 1-4 միավորով, որտեղ «1» նշանակում է «ընդհանրապես ապահով չեմ զգում», «2»՝ «ավելի շուտ ապահով չեմ զգում», «3»՝ «ավելի շուտ ապահով եմ զգում», «4»՝ «լիովին ապահով եմ զգում»:



# 15. **Հիմնական անհանգստությունները գիշերային ժամերին,** 2024 և 2026

**Հարց.** Որքա՞ն ապահով եք զգում՝ մութն ընկնելուց հետո փողոցում միայնակ գտնվելիս: Գնահատեք 1-4 միավորով, որտեղ «1» նշանակում է «ընդհանրապես ապահով չեմ զգում», «2»՝ «ավելի շուտ ապահով չեմ զգում», «3»՝ «ավելի շուտ ապահով եմ զգում», «4»՝ «լիովին ապահով եմ զգում»:




## Գիշերային ժամերին անհանգստության պատճառները

**Հարց.** Եթե ապահով չեք զգում Ձեզ՝ մութն ընկնելուց հետո մենակ գտնվելիս, ի՞նչն է ստիպում Ձեզ անհանգստանալ:

| | 2024 * | 2026 * | Պատասխանողների դինամիկան |
|---|---|---|---|
| Հանցագործությունից տուժելու ռիսկը | 25.9% | 40.2% | +14.3% |
| Թափառող շները և/կամ այլ կենդանիները | 37.7% | 29.3% | -8.4% |
| Փողոցներում ալկոհոլի կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ գտնվող մարդիկ | 16.3% | 24.1% | +7.8% |
| Ագրեսիվ պահվածքով անվերահսկելի երիտասարդները փողոցում | 8.3% | 13.0% | +4.7% |
| Ճանապարհատրանսպորտային պատահարից տուժելը, վրաերթի ենթարկվելու ռիսկը | 13.7% | 11.0% | -2.6% |
| Անձնական պատճառներ. առողջական խնդիրներ, վախեր | 1.8% | 4.7% | +2.9% |
| Հեռուստատեսությամբ և համացանցում քննարկվող հանցավորությունը ստիպում է անհանգստանալ | 3.3% | 3.5% | +0.1% |
| Օտարերկրացիները | 7.5% | 3.2% | -4.3% |
| Երկրի ընդհանուր վիճակը, տրամադրությունները | 1.8% | 2.3% | +0.5% |
| Սահմանամերձ գոտում գտնվելը, արտաքին թշնամին | 2.5% | 2.0% | -0.5% |
| Հանրային տարածքներում անվտանգության և առողջապահական կանոնների պահպանման անբավարար մակարդակը | 2.7% | 1.7% | -1.0% |
| Մթությունը, լուսավորության բացակայությունը | 3.4% | 1.4% | -2.1% |
| Զենքի առկայությունը մարդկանց մոտ | 1.1% | 0.3% | -0.7% |
| Այլ պատճառներ ** | 2.2% | 2.1% | -0.1% |
| Դժվարանում եմ պատասխանել | 4.1% | 2.4% | -1.7% |
| | N =390 *** | N =362 *** | |

*Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող են նշել մինչև 3 պատճառ:
** Այլ պատճառներում ներառված են հարցվողների կողմից 1% և ավելի ցածր հաճախականությամբ նշված պատասխանները:
Որպես այլ պատճառներ հարցվողները նշել են՝ սեռական փոքրամասնությունները, վեճերը, վայրի կենդանիները, ամայի փողոցները, ոստիկանության աշխատակիցների թերի աշխատանքը:
*** Հարցը տրվել է այն հարցվողներին, ովքեր նշել են, որ գիշերային ժամերին միայնակ փողոց դուրս գալիս ավելի շուտ կամ ընդհանրապես ապահով չեն զգում իրենց:



Նկարը ՆԳՆ ֆեյսբուքյան էջից

# 3. Ոստիկանության և ՆԳՆ-ի նկատմամբ վստահությունը և վերաբերմունքը

# 17. Ոստիկանության նկատմամբ վստահությունը, 2024 և 2026

**Հարց.** Ես կկարդամ հաստատությունների անուններ: Խնդրում եմ նշել դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ Ձեր ունեցած վստահության մակարդակը 1-5 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է «Բացարձակապես չեմ վստահում» իսկ «5»-ը՝ «Լիովին վստահում եմ»: Ոստիկանություն:



# 18. Ոստիկանության նկատմամբ վստահությունն ըստ հարցվողների սոցիալ-ժողովրդագրական ենթախմբերի, 2024 և 2026

**Հարց.** Ես կկարդամ հաստատությունների անուններ: Խնդրում եմ նշել դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ Ձեր ունեցած վստահության մակարդակը 1-5 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է «Բացարձակ չեմ վստահում» իսկ «5»-ը՝ «Լիովին վստահում եմ»:

«Բացարձակ» և «ավելի շուտ» չվստահելու գումարային ցուցանիշը | «Լիովին» և «ավելի շուտ» վստահելու գումարային ցուցանիշը | 2026 և 2024 թթ. «լիովին» և «ավելի շուտ» վստահելու գումարային ցուցանիշների դինամիկան | N =



## 19. **Վստահության մակարդակը ոստիկանության և ՆԳ նախարարության նկատմամբ,** 2024 և 2026

**Հարց.** Ես կկարդամ հաստատությունների անուններ: Խնդրում եմ նշել դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ Ձեր ունեցած վստահության մակարդակը 1-5 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է «Բացարձակապես չեմ վստահում» իսկ «5»-ը՝ «Լիովին վստահում եմ»:



# 20. **Ոստիկանության նկատմամբ վերաբերմունքը,** 2024 **և** 2026

**Հարց.** Ինչպիսի՞ն է ՀՀ ոստիկանության նկատմամբ Ձեր ընդհանուր վերաբերմունքը: Ձեր վերաբերմունքը գնահատեք 1-5 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է շատ բացասական, իսկ «5»՝ շատ դրական:



# 21. Ոստիկանության նկատմամբ վերաբերմունքն ըստ հարցվողների սոցիալ-ժողովրդագրական ենթախմբերի, 2024 և 2026

**Հարց.** Ինչպիսի՞ն է ՀՀ ոստիկանության նկատմամբ Ձեր ընդհանուր վերաբերմունքը: Ձեր վերաբերմունքը գնահատեք 1-5 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է շատ բացասական, իսկ «5»՝ շատ դրական:



# 22. Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ճանաչելիությունը, 2026

## Ոստիկանության ստորաբաժանումների ճանաչելիությունը

**Հարց.** Լսե՞լ եք արդյոք ոստիկանության հետևյալ ստորաբաժանումների մասին:



# 23. **Վերաբերմունքը ոստիկանության ստորաբաժանումների նկատմամբ,** 2024 և 2026

**Հարց.** Իսկ ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը ոստիկանության հետևյալ ստորաբաժանումների նկատմամբ: Կրկին գնահատեք 1-5 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է՝ շատ բացասական, իսկ «5»՝ շատ դրական:




* 2026թ. յուրաքանչյուր ստորաբաժանման նկատմամբ վերաբերմունքի հարցը տրվել է այն հարցվողներին, ովքեր նշել են, որ լսել են տվյալ ստորաբաժանման մասին:

# 24. Ոստիկանության աշխատանքի գնահատականն ըստ տարբեր չափանիշների, 2024 և 2026

**Հարց.** Այժմ ես կկարդամ մի շարք դատողություններ: Խնդրում եմ նշեք, թե որքանով եք համաձայն հետևյալ դատողությունների հետ: Խնդրում ենք գնահատել Ձեր համաձայնության մակարդակը 1-5-միավորով, որտեղ «1» նշանակում է «Ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «5»-ը՝ «Լիովին համաձայն եմ»:



## 25. **Ոստիկանության՝ սեփական իրավախախտումների դեպքում պատասխանատվության ենթարկվելու գնահատականը,** 2024 և 2026

**Հարց**. Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ է ոստիկանությունը պատասխանատվության ենթարկում ոստիկաններին իրենց կողմից կատարված իրավախախտումների համար:



# 26. Իրավախախտումների դեպքում ոստիկանության պատասխանատվության ենթարկվելու գնահատականը, թերացումների պատճառները

## Պատասխանատվության ենթարկվելը

**Հարց**. Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ է ոստիկանությունը պատասխանատվության ենթարկում ոստիկաններին իրենց կողմից կատարված իրավախախտումների համար:







## Պատասխանատվություն չկրելու պատճառների ընկալումները

**Հարց**. Ինչու՞ եք կարծում, որ ոստիկանությունը բավարար չափով պատասխանատվություն չի կրում սեփական իրավախախտումների համար:

| | 2024 * | 2026 * | Պատասխանների դինամիկան |
|---|---|---|---|
| Ներքին վերահսկողությունն անկատար է, այսինքն՝ բավարար չափով չեն պահպանվում բարեվարքության և էթիկայի նորմերը | 38.6% | 29.9% | -8.7% |
| Ականատես եմ եղել նման դեպքերի, հեռուստատեսությունով եմ տեսել, որ չեն պատժվել, օրինակ՝ ցույցերի ժամանակ | 14.8% | 23.6% | +8.8% |
| Օրենքն իրենց ձեռքում է, իրենք իրենց պաշտպանում են, դեպքերը քողարկում | 7.4% | 18.2% | +10.8% |
| Առկա են միջամտություններ քաղաքական դերակատարների կողմից | 14.9% | 10.8% | -4.1% |
| Բավարար չափով չի աշխատում արտաքին վերահսկողության համակարգը | 12.3% | 10.5% | -1.7% |
| Երբեք չենք տեսել, որ պատժվեն | 6.3% | 5.0% | -1.2% |
| Մենթալիտետը թույլ չի տալիս | 0.8% | 0.4% | -0.4% |
| Դժվարանում եմ/հրաժարվում եմ պատասխանել | 11.7% | 8.5% | -3.2% |
| | N =577 ** | N =546 ** | |

*Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող են նշել մինչև 3 պատճառ:

** Հարցը տրվել է այն հարցվողներին, ովքեր նշել են, որ ոստիկանները ավելի շուտ կամ բացարձակ պատասխանատվության չեն ենթարկվում իրավախախտումների համար:

# 4. Ոստիկանության հետ առնչվելու փորձառությունը և գոհունակությունը ոստիկանության աշխատանքից



Նկարը՝ ՆԳՆ կայքից

# 28. Բավարարվածության մակարդակը ոստիկանության գործառույթներով

**Հարց.** Որքանո՞վ եք բավարարված ոստիկանության՝ հետևյալ ոլորտներից յուրաքանչյուրին արձագանքելու արդյունավետությամբ: Խնդրում ենք գնահատել նրանցով Ձեր բավարարվածության մակարդակը 5 միավոր սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «Ընդհանրապես բավարարված չեմ» իսկ «5»-ը նշանակում է «Լիովին բավարարված եմ»:




* 2024թ. նշված գործառույթի դեպքում բավարարվածության հարցը չի տրվել:

2026 N= 1812
2024 N =1801

# 29. ՆԳՆ և ոստիկանության առանձին ստորաբաժանումների հետ առնչությունը և գոհունակությունը

**Հարց.** Վերջին 12 ամիսների ընթացքում առնչվե՞լ եք արդյոք ոստիկանության ստորաբաժանումների աշխատակիցների հետ:

**Հարց.** Ինչպե՞ս կգնահատեք Ձեր գոհունակության աստիճանը ոստիկանության ստորաբաժանման աշխատանքով 1-5 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է, որ չափազանց դժգոհ եք, իսկ «5»-ը, որ չափազանց գոհ եք:




* Փոքր ընտրանքի պատճառով սխալի հավանականությունը կարող է լինել մեծ:

** 2024թ. նշված ստորաբաժանումների դեպքում գոհունակության հարցը չի տրվել:

## 30. Ոստիկանությանը հաղորդում տալու փորձառությունը

### Ոստիկանությանը հաղորդում տալու փորձառությունը

**Հարց**. Վերջին 3 տարում հանցագործության մասին հաղորդում տվե՞լ եք ոստիկանությանը:

2026 և 2024 վերջին 3 տարում հաղորդում տված հարցվողների մասնաբաժնի դինամիկան

▲ +2.4%




- Վերջին 3 տարում հանցագործության մասին հաղորդում տվել եմ ոստիկանությանը
- Վերջին 3 տարում հանցագործության մասին հաղորդում չեմ տվել ոստիկանությանը
- Հրաժարվում եմ պատասխանել

### Ոստիկանության արձագանքը հաղորդմանը

**Հարց.** Եթե հանցագործության մասին հաղորդում եք տվել ոստիկանություն, ինչպե՞ս են նրանք արձագանքել:

| | 2024 | 2026 | Պատասխանների դինամիկան |
|---|---|---|---|
| Իմ հաղորդումը գրանցվել է, սակայն խնդիրը չի լուծվել | 66.3% | 67.1% | +0.8% |
| Իմ հաղորդումը գրանցվել է և խնդիրը լուծվել է | 25.5% | 26.2% | +0.7% |
| Իմ հաղորդումը գրանցվել է, իսկ խնդիրը մասամբ է լուծվել | | 1.4% | +1.4% |
| Իմ հաղորդումը չի գրանցվել | 3.5% | 0.8% | -2.7% |
| Իմ ցանկությամբ կասեցվել է | | 0.8% | +0.8% |
| Իմ հաղորդումը գրանցվել է, գործը դեռևս ընթանում է | 2.3% | 0.6% | -1.8% |
| Դժվարանում եմ պատասխանել | 2.3% | 3.1% | +0.8% |
| | N =94 * | N =138 * | |

* Հարցը տրվել է այն հարցվողներին, ովքեր նշել են, որ վերջին 3 տարում հանցագործության մասին հաղորդում տվել են ոստիկանությանը:

# 31. Ոստիկանությանը հաղորդում ներկայացնելը և չներկայացնելու պատճառները

## Ոստիկանությանը չհաղորդելը

**Հարց.** Երբևէ եղե՞լ է, որ տուժեք հանցագործությունից/բռնությունից/միջադեպից, բայց չեք հաղորդել այդ մասին ոստիկանությանը:

2026 և 2024 հանցագործությունից տուժած, բայց այդ մասին ոստիկանությանը չհաղորդած հարցվողների մասնաբաժինների դինամիկան




■ Եղել է դեպք, որ տուժեմ հանցագործությունից, բայց չհաղորդեմ ոստիկանություն
▨ Չի եղել դեպք, որ տուժեմ  հանցագործությունից, բայց չհաղորդեմ ոստիկանություն
■ Հրաժարվում եմ պատասխանել

## Ոստիկանությանը չհաղորդելու պատճառները

**Հարց.** Եթե տուժել եք հանցագործությունից/բռնությունից/միջադեպից, բայց չեք հաղորդել դրա մասին ոստիկանություն, ապա ո՞րն է եղել չհաղորդելու պատճառը:

| | 2024* | 2026* | Պատասխանների դինամիկան |
|---|---|---|---|
| Բյուրոկրատական քաշքշուկը չափազանց շատ է | 28.9% | 26.8% | -2.1% |
| Ոստիկանությունը չուներ խնդրի լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները | 8.4% | 17.0% | +8.6% |
| Խախտումը լուրջ չէր | 16.1% | 15.2% | -0.9% |
| Ոստիկանությանը չվստահելը (վստահ չեն, որ արդյունք կլինի) | 23.5% | 13.7% | -9.9% |
| Իրավախախտն իմ ծանոթն էր, բարեկամն էր | 3.9% | 11.0% | +7.1% |
| Կարծում եմ, որ ոստիկանները համագործակցում են հանցագործների հետ | 4.6% | 9.4% | +4.8% |
| Ինքս եմ լուծել հարցը | 2.1% | 9.0% | +6.8% |
| Հաղորդում տալը բացասաբար է ընդունվում հասարակության կողմից | 4.6% | 7.9% | +3.3% |
| Ոստիկանության հետ իմ նախկին շփումների փորձը բացասական է եղել | 5.5% | 3.6% | -1.9% |
| Ոստիկանները բավարար տեղեկացված չեն իրավական լուծումների մասին | 4.3% | 2.4% | -1.9% |
| Ապացույցներ չունեի | 3.4% | 2.2% | -1.2% |
| Չկար կապ հաստատելու հնարավորություն (հեռախոս կամ ժամանակ) | | 1.7% | +1.7% |
| Ինձ մեղադրելու մտավախությունը | 1.4% | 1.4% | -0.1% |
| Անչափահաս էի, իրավագիտակցություն չունեի | | 0.7% | +0.7% |
| Չեմ գտել թաղային ոստիկանին | 0.7% | | -0.7% |
| Դժվարանում եմ պատասխանել | 8.1% | 7.1% | -1.0% |
| | N =154 ** | N =170 ** | |

*Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող են նշել մի քանի պատճառներ:
** Հարցը տրվել է այն հարցվողներին, ովքեր նշել են, որ եղել է դեպք, որ իրենք տուժեն հանցագործությունից, բայց չհաղորդեն ոստիկանություն:

# 32. Համայնքային ոստիկանին ճանաչելը և առնչվելու փորձը

## Համայնքային ոստիկանին ճանաչելը

**Հարց**. Ճանաչում եք արդյոք Ձեր համայնքային ոստիկանին:

2026 և 2024 վերջ համայնքային ոստիկաններին
ճանաչող հարցվողների մասնաբաժնի դինամիկան

▼ -3.2%




## Համայնքային ոստիկանի հետ առնչությունը

**Հարց.** Վերջին 12 ամիսներին առնչվել եք արդյոք համայնքային ոստիկանության հետ:

2026 և 2024 վերջ համայնքային ոստիկանների հետ
առնչվող հարցվողների մասնաբաժնի դինամիկան

▲ +4.4%





Նկարը՝ ՆԳՆ կայքից

# 5. ՆԳՆ և ոստիկանության առանձին բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը և դրանց նկատմամբ վերաբերմունքը

## 34. **ՆԳՆ–ում և ոստիկանությունում տեղի ունեցող առանձին բարեփոխումների մասին իրազեկվածության մակարդակը**

**Հարց**. Տեղյա՞կ եք արդյոք, որ ՀՀ ոստիկանությունում շարունակաբար իրականացվում են բարեփոխումներ:

**Հարց**. Այժմ ես կթվարկեմ ոստիկանության համակարգում տեղի ունեցող բարեփոխումների տարբեր ուղղություններ: Խնդրում եմ նշեք, լսել եք արդյո՞ք դրանց մասին:



# 35. **Օպերատիվ կառավարման կենտրոնի նոր հեռախոսահամարի մասին տեղեկացվածությունը,** 2026

**Հարց.** Տեղյա՞կ եք, որ ոստիկանության 1-02 և փրկարար ծառայության 911 նախկին հեռախոսահամարի փոխարեն այժմ գործում է 112 (մեկ մեկ երկու) հեռախոսահամարը:

**ՕԿԿ նոր հեռախոսահամարի մասին տեղեկացվածությունը**






# 36. Ոստիկանության աշխատանքում կատարված փոփոխությունների գնահատումը

**Հարց.** Վերջին 12 ամիսների ընթացքում <u>ոստիկանության աշխատանքում</u> ինչպիսի՞ փոփոխություն եք նկատել՝ լինի դրական կամ բացասական:




- Զգալիորեն բարելավվել է
- Ավելի շուտ բարելավվել է
- Նույնն է մնացել
- Ավելի շուտ վատացել է
- Էապես վատացել է
- Դժվարանում եմ պատասխանել




- Զգալիորեն բարելավվել է
- Ավելի շուտ բարելավվել է
- Նույնն է մնացել
- Ավելի շուտ վատացել է
- Էապես վատացել է
- Դժվարանում եմ պատասխանել

**Պատասխանների դինամիկան**

▲+1.9%

2026 և 2024 թվականների «զգալիորեն բարելավվել է» և «ավելի շուտ բարելավվել է» պատասխանների գումարային ցուցանիշների դինամիկան

▲+0.6%

2026 և 2024 թվականների «էապես վատացել է» և «ավելի շուտ վատացել է» պատասխանների գումարային ցուցանիշների դինամիկան

# 37. Դրական փոփոխությունները պարեկային ծառայության ներդրումից հետո

## Փոփոխությունների բնույթը

**Հարց**. Ինչ փոփոխություններ եք նկատել ոստիկանական ծառայության աշխատանքում **պարեկային ծառայության** ներդրումից հետո:

▼-0.5%

2026 և 2024 թվականների «նկատել եմ զգակի դրական փոփոխություններ» և «նկատել եմ որոշակի դրական փոփոխություններ» պատասխանների գումարային ցուցանիշների դինամիկան




## Դրական փոփոխությունները

**Հարց**. Խնդրում եմ մատնանշել, թե պարեկային ոստիկանության ներդրման հետ կապված ինչ դրական փոփոխություններ եք նկատել:

| | 2024 * | 2026 * | Պատասխանների դինամիկան |
|---|---|---|---|
| Քաղաքավարի ու պրոֆեսիոնալ հաղորդակցությունը | 16.6% | 25.2% | +8.6% |
| Գործում են բարեխղճության և օրինականության սկզբունքների համաձայն | 19.8% | 23.2% | +3.4% |
| Գործառույթների արդյունավետ կատարումը ** | 22.9% | 22.5% | -0.4% |
| Երթևեկության բարելավումը/ վթարների նվազումը/խցանումների կարգավորումը | 14.2% | 18.6% | +4.5% |
| Աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությունը | 17.2% | 14.1% | -3.1% |
| Քաղաքացիների վարքագծի դրական փոփոխությունը, վարորդներն ավելի զգոն են | 18.5% | 7.5% | -10.9% |
| Արդյունավետ արձագանքում են հարցումներին/ հաղորդումներին | 8.8% | 6.4% | -2.4% |
| Համազգեստը | 3.0% | 2.6% | -0.5% |
| Քանակային աճ է նկատվում | 0.8% | 1.6% | +0.8% |
| Այց ուսումնական հաստատություն, զրույց աշակերտների հետ | 0.1% | 0.3% | +0.2% |
| Երիտասարդ կադրերի և կանանց ներգրավվածությունը | 0.7% | 0.1% | -0.6% |
| Անտառահատումների, արգելված ձկնորսության նվազումը | 0.2% | 0.0% | -0.2% |
| Դժվարանում եմ պատասխանել | 5.9% | 3.4% | -2.4% |
| | N =1247 *** | N =1245 *** | |

* Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող էին նշել մի քանի փոփոխություններ:

** Գործառույթների արդյունավետ կատարում ասելով՝ հարցվողները նկատի են ունեցել ՝ ճանապարհներին ապահովության զգացման ավելացում, մեքենաներից գողությունների/ վեճերի թվի նվազում, ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ գտնվող անձանց վրա ուշադրության կենտրոնացում, կարգուկանոնի հաստատում:

*** Հարցը տրվել է այն հարցվողներին, ովքեր նշել են, որ նկատել են զգալի կամ որոշակի դրական փոփոխություններ պարեկային ծառայության ներդրումից հետո:

# 38. Բացասական փոփոխությունները պարեկային ծառայության ներդրումից հետո

## Փոփոխությունների բնույթը

**Հարց.** Ինչ փոփոխություններ եք նկատել ոստիկանական ծառայության աշխատանքում պարեկային ծառայության ներդրումից հետո:

▼-0.7%

2026 և 2024 թվականների «նկատել եմ զգալի բացասական փոփոխություններ» և «նկատել եմ որոշակի բացասական փոփոխություններ» պատասխանների գումարային ցուցանիշների դինամիկան




## Բացասական փոփոխությունները

**Հարց.** Խնդրում եմ մատնանշել, թե Պարեկային ոստիկանության ներդրման հետ կապված ինչ բացասական փոփոխություններ եք նկատել:

| | 2024* | 2026 | Պատասխանների դինամիկան |
|---|---|---|---|
| Որակավորումը բավարար չէ ճանապարհներին իրավիճակը կարգավորելու համար | 33.8% | 24.6% | -9.2% |
| Չեն գործում բարեվարքության և օրինականության սկզբունքների համաձայն ** | 8.8% | 23.2% | +14.4% |
| Քաղաքացիների նկատմամբ կոպիտ վերաբերմունք | 31.0% | 21.7% | -9.4% |
| Անտարբերություն, իրենց աշխատանքի թերի կատարում | 4.8% | 12.9% | +8.1% |
| Անզգազիտություն, պրոֆեսիոնալիզմի բացակայություն | 4.8% | 10.0% | +5.2% |
| Օրենքի խախտում ոստիկանների կողմից /թմրանյութերի վաճառք, երթևեկության կանոնների խախտում | | 3.4% | +3.4% |
| Չեմ նկատել որևէ փոփոխություն/ շփում չեմ ունեցել պարեկային ոստիկանության հետ | 5.0% | 2.1% | -2.9% |
| Պետբյուջեից գումարի անիհարկի հատկացումը | 4.9% | 1.9% | -3.0% |
| Քաղաքացիների հարցումներին/հաղորդումներին արձագանքն արդյունավետ չէ | 9.2% | 1.5% | -7.6% |
| Հսկողությունից լարված մթնոլորտ է ստեղծվում | 1.9% | 0.8% | -1.1% |
| Համազգեստը | | 0.8% | +0.8% |
| Փորձի բացակայությունը | 1.2% | | -1.2% |
| Դժվարանում եմ պատասխանել | 11.5% | 10.2% | -1.3% |
| | N =155 *** | N =142 *** | |

* Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող էին նշել մի քանի փոփոխություններ:

** «Չեն գործում բարեվարքության և օրինականության սկզբունքների համաձայն» պատասխանն ավելացվել է 2026թ., 2024թ. համար նշված պատասխանում միավորվել են «տուգանքների ավելացում, երբեմն՝ անիհմն»՝ 6.3%, «անարդար վերաբերմունք քաղաքացու նկատմամբ»՝ 2.5%, տարբերակները:

*** Հարցը տրվել է այն հարցվողներին, ովքեր նշել են, որ նկատել են զգալի կամ որոշակի բացասական փոփոխություններ պարեկային ծառայության ներդրումից հետո:



Նկարը՝ ՆԳՆ կայքից

# 6. Ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության ընկալումները

# 40. **Ոստիկանական համակարգի տարբեր ոլորտներում կանանց աշխատելու գնահատականը**

**Հարց**. Ձեր կարծիքով, տղամարդիկ և կանայք հավասարապես ունա՞կ են աշխատել ոստիկանական համակարգի հետևյալ ոլորտներում.



# 41. Ոստիկանական համակարգում կանանց դերի մասին պատկերացումները

**Հարց.** Այժմ ես կկարդամ մի շարք պնդումներ: Խնդրում եմ նշեք, թե որքանով եք համաձայն դրանցից յուրաքանչյուրի հետ: Խնդրում ենք գնահատել Ձեր համաձայնության մակարդակը 5 միավորով, որտեղ «1» նշանակում է «Ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «5»-ը՝ «Լիովին համաձայն եմ»:



# 42. Ոստիկանական համակարգում կանանց դերի մասին պատկերացումները ըստ սեռի

**Հարց.** Այժմ ես կկարդամ մի շարք պնդումներ: Խնդրում եմ նշեք, թե որքանով եք համաձայն դրանցից յուրաքանչյուրի հետ: Խնդրում ենք գնահատել Ձեր համաձայնության մակարդակը 5 միավորով, որտեղ «1» նշանակում է «Ընդհանրապես համաձայն չեմ», իսկ «5»-ը՝ «Լիովին համաձայն եմ»:





# 7. Ոստիկանությունում աշխատանքի անցնելու հետաքրքրվածությունը

Նկարը՝ https://www.edupolice.am/

# 44. Ոստիկանությունում աշխատանքի անցնելու հետաքրքվածությունն ըստ հարցվողների սոցիալ-ժողովրդագրական ենթախմբերի, 2024 և 2026

**Հարց.** Եթե հետաքրքրվեք Ոստիկանությունում աշխատանքի անցնելու հնարավորությամբ, ի՞նչ եք կարծում, ունե՞ք բավարար տեղեկություններ ծառայության անցնելու համապատասխան ընթացակարգերի մասին:







Նկարը՝ viory.video կայքից

# 8. Տեղեկատվության ստացման աղբյուրները

# 46. Ոստիկանության վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրները, 2024 և 2026

**Հարց**. Սովորաբար ի՞նչ տեղեկատվական աղբյուրներից եք տեղեկություններ ստանում Ոստիկանության աշխատանքի մասին:




*Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող են նշել մի քանի աղբյուր:

# 47. Ոստիկանության կողմից հանրությանը տեղեկատվություն տրամադրելու աշխատանքներով բավարարվածությունը, 2026

**Հարց.** Որքանո՞վ եք բավարարված ոստիկանության կողմից հանրությանը տեղեկատվություն տրամադրելու աշխատանքներով: Խնդրում ենք բավարարվածությունը գնահատել 1-5 միավորով, որտեղ «1»-ը նշանակում է «Ընդհանրապես բավարարված չեմ», իսկ «5»-ը՝ «Լիովին բավարարված եմ»:






## 48. **Իրադարձությունների մասին տեղեկատվության ստացման աղբյուրները,** 2024 և 2026

**Հարց**. Ի՞նչ աղբյուրներից եք առավել հաճախ տեղեկատվություն ստանում երկրում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Նշեք առավել հաճախ օգտագործվող 3 աղբյուրները:




*Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող են նշել մի քանի աղբյուր:

# 49. Իրադարձությունների մասին տեղեկատվության ստացման աղբյուրները, 2024 և 2026

**Հարց**. Ի՞նչ աղբյուրներից եք առավել հաճախ տեղեկատվություն ստանում երկրում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Նշեք առավել հաճախ օգտագործվող 3 աղբյուրները:




*Տոկոսների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ հարցվողները կարող են նշել մի քանի աղբյուր:

# 9. Հարցվողների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը



Նկարը՝ adventurouskate.com կայքից

# 50. Հարցվողների սեռը, տարիքը, կրթությունը և բնակավայրը, 2024 և 2026

## Սեռը




## Տարիքը




## Կրթությունը




## Բնակավայրը*




*կշռված համամասնությունը



# 52. Հարցվողների զբաղվածությունը, քաղաքացիությունը 2024 և 2026

## Զբաղվածությունը







## Քաղաքացիությունը




*Հարցն ավելացվել է դաշտային աշխատանքների մեկնարկից մի քանի օր անց:

Շնորհակալություն